ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«26» փետրվարի 2024թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմեն Ավետիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի և ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

2.2. ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3) հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի տնօրենը լիազորել է հիշյալ անձին իր փոխարեն ստորագրելու և ներկայացնելու Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կողմից կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում փաստաթղթեր, այն դեպքում, երբ լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը ներկայացվել են Դատական դեպարտամենտի կողմից կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցության հայտով,

- 4-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. փետրվարի 28-ին, ժամը 15:30-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի և ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **փետրվարի 27-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Արմեն Ավետիսյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան